ԱՐՑԱԽ.
երկու հարցազրույց

Արցախի հայ ազգաբնակչությունը անթեղած պողի նման պահում-պահպանում է նախորդներից ավանդված հույսն ու պատգամը, հաստատ համոզված լինելով, որ «վերևներում» վերջապես կհասկանան իր ցավն ու դրանից բխող պահանջը:

Լրագրող Նորայր ՄՈՎՍԻՍՅԱՆԸ իր ծննդավայրում հանդիպել է Մարտունու շրջանի անվանի մարդկանց, զրուցել նրանց հետ: Դրանցից մեկը՝ պատերազմի և աշխատանքի վետերան Խաչիկ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, երկար տարիներ ղեկավարել է շրջանի մի շարք կազմակերպություններ:

ՀԱՐՑ.— 1988-ի փետրվարի 20-ը պատմության մեջ մտավ որպես հայ ժողովրդի ազգային ազատագրական նոր շարժման սկիզբ: Ինչպե՞ս կգնահատեիք այդ երևույթը:

ՊԱՏ.— Ես կասեի՝ արցախյան շարժումը վաղուց է սկսվել: Տասնամյակներ շարունակ Արցախի ժողովուրդը, առանձին կազմակերպություններ ու գործիչներ տարբեր ձևերով իրենց բողոքի ձայնն են բարձրացրել՝ չտեսնելու 20-ական թվականներին թույլ տրված անարդարությունները: Այդ տեսանկյունից 1988-ի փետրվարի 20-ի մարզխորհրդի նստաշրջանը մի կողմից արդյունք էր դիմադրության ու բացախոսության քաղաքականության, մյուս կողմից՝ տրամաբանական շարունակությունն էր մեր ժողովրդի նախորդ ելույթների. ես կասեի՝ նրանց բարձրակետը, ազդող հրդեհի «հերթական», բայց այս անգամ լուրջ, չդադարող ժայթքումը:

Համբերության բաժակը այլևս լցվել էր:

Եթե նույնիսկ բռնակալ Միր Ջաֆար Բաղիրովի օրոք իշխանության վերին օղակներում, կուսակցական ու խորհրդային մարմիններում կային հայազգի շատ ներկայացուցիչներ, ապա նրանից հետո գործը գնալով վատթարացավ: Մուստաֆաևի, Ախունդովի և հատկապես Ալիևի ժամանակ Արցախի հայ բնակչության վիճակը դարձավ անելանելի: Եթե առաջ Կենտկոմի քարտուղարներից կամ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալներից մեկը հայ էր, եթե առանձին նախարարներ, ձեռնարկությունների հայազգի ղեկավարներ կային, ապա դրանից հետո նրանք դուրս մղվեցին ղեկավար պաշտոններից: Կադրային նման քաղաքականությունը շարունակվեց նաև այստեղ՝ մարզային ու շրջանային կազմակերպություններում: Ղեկավարման վահանակների մոտ ունենք պես անցյին թուրքեր և թուրքամետ հայեր, որոնք իրենց հավատարմությամբ առաջիններից պակաս չէին: Կադրերի ընտրության ու նշանակման բոլոր ճանապարհներն անցնում էին Բաքվով...

20-ական թվականներին, երբ Ս. Մ. Կիրովին տեղափոխեցին Ադրբեջանից, Հանրապետությունում չգտնվեց մի ադրբեջանցի, որ փոխարիներ նրան, և մեր հայրենակից Լևոն Միրզոյանը փոխարինեց: Երեսնական թվականներից հետո միայն Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում տեսնում ենք Միր Ջաֆար Բաղիրովին: Ստացվում է պարադոքս. ղարաբաղցիները մի ժամանակ կարող էին ղեկավարել ողջ հանրապետությունը, իսկ մեր օրերում՝ շրջանի ղեկավարներն էլ պետք է Բաքվից հրավիրվեին: Կամ վերցնենք մեկ ուրիշ հանգամանք՝ տնտեսության պլանավորումը: Հիսնական թվականներին ես աշխատում էի կուսշրջկոմի երկրորդ քարտուղար, որից հետո մոտ մեկ տասնամյակ ղեկավարել եմ շրջանային խորհուրդը: Մենք ամեն օր տեսնում էինք, թե ինչպիսի խտրական բնույթ ունեն մթերքների պետական պլանավորումը: Մարզի պլանավորումը կատարվում էր առանց հաշվի առնելու նրա հնարավորությունները: Մեզանից կորզում էին ինչքան հնարավոր է շատ և դրա դիմաց համարյա ոչինչ չէին տալիս:

Վերջին երեսնամյակում [illegible] ժամանակաշրջանում ունեցած [illegible] բերել են այն համատ համազ-ման, որ մեր կողմից ոչ մի սխալ թույլ չի տրվել: Այն ժամանակ մենք հույս ունեինք, որ կենտրոնական իշխանությունները մեր ձայնը կլսեն, և արդարացի որոշում կընդունվի, բայց հիմա կարծում եմ, որ ինչ որոշում էլ ընդունեինք, միևնույն է՝ կենտրոնը մեզ խանգարելու էր: Էլ չենք խոսում մեր հարևանի մասին: Հայաստանի Գերագույն խորհուրդը, չնայած ուշացումով, այնուամենայնիվ, կայացրեց իր որոշումը և անցած ժամանակաշրջանում մի անգամ չէ, որ անդրադարձել է այդ հարցին, բայց տեսանք, թե ինչ ստացվեց... Ուրեմն՝ խնդիրը ոչ թե ինչ-որ օղակներում թույլ տրված սխալի մասին է, այլ կենտրոնական իշխանությունների հետևողական քաղաքականության: Մեկ անգամ չէ, որ Միխայիլ Գորբաչովը հայտարարել է, որ ղարաբաղյան պրոբլեմ, իրոք, գոյություն ունի, որ Ղարաբաղի հայության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունները վերաբերվել են ոչ մարդկային ձևով, որ այդ հարցը անպայման պետք է լուծվի, լուծվի փոփոխությունների միջոցով: Իսկ ի՞նչ ստացվեց այդ, այսպես ասած, փոփոխություններից: Ո՞ւր տարան մեզ այդ փոփոխությունների խոստումները: Այսօր այդ փոփոխությունները հասցրել են նրան, որ փաստորեն ադրբեջանական իշխանությունները ինչ ցանկացել են, կենտրոնական կառավարությունը արդարեն կատարել է: Այդ չեն ժխտում անգամ իրենք՝ Ադրբեջանի ղեկավարները: Տարբեր ժամանակներում տարբեր առիթներով նրանք հայտարարել են՝ Մոսկվան մեզ հետ է... Իսկ ինչ վերաբերում է մեր մարզային կուսակցական, խորհրդային կազմակերպությունների, Ղարաբաղի հայ բնակչության պահանջներին, ապա ոչինչ չի կատարվել: Եվ այսօր մենք փաստորեն զրկված ենք և մարզային կուսակցական ատյանից, և, իրականում, մարզային խորհրդի գործադիր կոմիտեից: Նրա լիազորությունները չեն ճանաչվում ոչ կենտրոնում և ոչ էլ Ադրբեջանում: Ահա թե ինչպես պետք է հասկանալ «փոփոխման» քաղաքականությունը: Այժմ բոլորն էլ կոչ են անում հասնել բանակցությունների կլոր սեղանի շուրջը: Բայց հարց է ծագում՝ ո՞վ և ո՞ւմ հետ պետք է նստի բանակցության:

Սանդեմել է, այսպես կոչված, հանրապետական կազմկոմիտեի՝ Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Հարց է ծագում՝ դա ի՞նչ մարմին է, ո՞վ է նրան լիազորություններ տվել: Ես չեմ ուզում փաստարկել, թե ինչու փաստորեն կազմկոմիտե չկա: Դա ուրիշ հարց է, բայց պետք է պարզել, թե նրա կազմում ինչո՞ւ Արցախի ներկայացուցիչներ չկան, ինչո՞ւ մերոնք հրաժարվում ու չեն մտնում կազմկոմիտեի մեջ: Այն անարդարությունները ու անարգանքները, որ գործի են դրել մեր մարզի ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ, որևէ չափով երբևէ դատապարտվե՞լ են այդ կազմկոմիտեի կողմից, երբեք: Եթե Սումգայիթում, Կիրովաբադում, Շուշիում, Բաքվում կատարված դեպքերը դատապարտվեին, և եթե մեր մարզային կազմակերպությունները իրենց տեղում լինեին, թերևս բանակցությունները հնարավոր լինեին: Ինչո՞ւ, ասենք, Տաջիկստանում, ուր փաստորեն ոչ մի հայ չի տուժել, տեղի են բոլոր կազմակերպությունները հատուկ նամակով ներողություն են խնդրել հայ ժողովրդից, իսկ ադրբեջանական ոչ մի կազմակերպություն մինչև հիմա մեզ չներել այդ բարբարոս գործողությունների, այդքան անմեղ զոհերի համար:

ՀԱՐՑ.— Մի հարց ևս. կենտրոնական իշխանությունների վերաբերմունքը գորբաչովյան վերակառուցման արդյո՞ւնքն է, թե՞ լենին-ստալինյան քաղաքականության ավանդական շարունակություն:

ՊԱՏ.— Կենտրոնական իշխանությունների վերաբերմունքի մեջ դժվար է միանշանակ պատասխան գտնել. ինձ թվում է՝ այստեղ գոյություն ունի և նախկին քաղաքականության իներցիան, և, միաժամանակ, ինչպես կյանքն է ցույց տալիս, կենտրոնական իշխանությունների հռչակած՝ երկրի դեմոկրատացման քաղաքականության իրականացման գործում անվճռականությունը: Քիչ առաջ խոսեցինք Գորբաչովի կողմից բազմիցս հայտարարված փոփոխությունների հողի վրա ղարաբաղյան պրոբլեմի արդար լուծման մասին: Բայց մենք այդպես էլ չհասկացանք, թե ո՞րն է Բաքվի զիջումը Ղարաբաղի պրոբլեմի արդար լուծման համար: Ոչ մի զիջում առայժմ չենք տեսել, իսկ բռնությունները, արյունահեղությունը, հարյուր հազարավոր անմեղ մարդկանց ահավոր տեղահանությունը՝ որքան ուզեք... Մենք դեմ ենք նման «փոփոխություններին»: Այստեղ զուգե այն հանգամանքն է կարևորվում, որ վերակառուցման կուրսի նախաձեռնողները, հռչակողները ու իրականացնողները, ինչպես ասում են, ստալինյան ժամանակաշրջանի «հացից» բաժին են կերել: Եվ բացառված չէ, որ քաղաքական ավանդական շարունակությունն էլ իր տեղն ունի այսօրվա իրադրության մեջ, չնայած խոսքով լրիվ դատապարտում ենք անձի պաշտամունքի ժամանակաշրջանի անարդարությունները:

ՀԱՐՑ.— Գիտեմ, որ և շրջկենտրոնում, և շրջանի այլ բնակավայրերում շրջափակման պատճառով շինարարություն չի կատարվում, իսկ ինչպե՞ս է վիճակը ձեր հարևան ադրբեջանաբնակ գյուղերում:

ՊԱՏ.— Շրջանի ադրբեջանաբնակ գյուղերում շինարարություն է կատարվում, այն էլ շատ արդյունավետ ձևով: Դա նպատակ ունի նոր օբյեկտներ կառուցել զուտ ադրբեջանական գյուղերում, պարզ է՝ արդյունաբերական, կենցաղային սպասարկման ու տարբեր բնույթի օբյեկտների կառուցումը միաժամանակ նպատակ ունի նաև բնակչության համապատասխան կոնտինգենտի ավելացում: Եվ դա էլ, վերջիվերջո, հետապնդում է մի հեռահար նպատակ՝ փոխել մարզի ժողովրդագրական դեմքը: Կոնկրետ մեր շրջանում թուրքաբնակ փոքրիկ գյուղերը, ասենք, Մուղանլուն, Կուրոպատկինոն, Ամիրանլարը և այլ գյուղեր աճում են, մեծ թափ է առնում շինարարությունը: Ընդ որում, նրանց ոչինչ ու ոչ ոք չի խանգարում, դեռ ավելին՝ օգնում են, հատկապես զինվորականները, որպեսզի ամեն ինչ կատարվի որքան հնարավոր է շուտ: Մի բան, ինչի մասին մենք կարող ենք միայն երազել...

Մենք շինանյութեր կարող ենք տեղափոխել միայն Հայաստանից կամ մյուս հանրապետություններից, բայց ինչպե՞ս, երբ տրանսպորտի միակ միջոցը ինքնաթիռն է, այն էլ չի հասցնում անգամ մարդկանց տեղափոխել, էլ ուր մնաց շինանյութեր...

Այ, տեսնում եք, Խոջալուն մեծանում է, ինչպես նաև ադրբեջանական մյուս գյուղերը: Վերցնենք թեկուզ մեր շրջանի Խոջավանդ բնակավայրը, որը վերջին տարիներին Մարտունու շրջկենտրոնի մի փոքրիկ թաղամասն էր, հիմա չգիտես ինչու այդ թաղամասը կտրել, անջատել են, դարձրել առանձին գյուղ, ստեղծել առանձին գյուղխորհուրդ: Օրինակներ կարելի է շատ բերել: Ջրաբերդցիների այն է, որ մեկի աճի ու զարգացման համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում, իսկ մյուսի համար՝ արհեստական արգելքներ ու խոչընդոտներ: Սա նույն խտրական քաղաքականության շարունակությունն է, ուրիշ ոչինչ...

ԹՂԹ.— Շնորհակալություն:

***

Մարտունու քաղաքն էլ ունի իր հոգսերն ու հիմնահարցերը, որոնք առաջին հերթին անհանգստացնում են քաղխորհրդի գործկոմին, հատկապես նրա նախագահ ԺՈՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ.

***

— Մեր պրոբլեմները շատ են,— ասում է նա։— Դրանք կարելի է բաժանել երեք խմբի՝ տնտեսական, քաղաքական և ազգային: Տնտեսական խնդիրներից ամենակարևորը բնակարանային հարցն է: Շուրջ հազար ընտանիք ունեցող մեր փոքրիկ քաղաքն են տեղափոխվել 350-ից ավելի փախստականներ: Նրանց մոտ կեսը ապահովված է բնակարաններով: Մի մասին էլ մենք հատկացրել ենք հողամաս՝ առանձնատուն կառուցելու համար: Սակայն շինանյութերի բացակայությունը, հատկապես ավազահատի ու ցեմենտի պակասը, խանգարում է բնակարանային շինարարության ծավալմանը: Այդ պատճառով առանձին մարդիկ թողնում ու հեռանում են քաղաքից ու շրջանից, իսկ դա չի կարող չանհանգստացնել մեզ:

Տնտեսական մյուս խնդիրը բնակչության նյութական ապահովվածության, հատկապես՝ պարենամթերքի մատակարարման հարցն է: Դա մեզ մոտ այնքան էլ վատ չէ:

ՀԱՐՑ.— Կարծեմ, ընթացիկ տարին այդ տեսակետից բարեհաջող էր:

ՊԱՏ.— Այո, բարեբախտաբար, հարուստ բերք ենք ստացել: Հացի բնագավառում ոչ մի դժգոհություն չունենք: Երբեք հացահատիկի այդպիսի բերք չի ստացվել: Մոտ 40 հազար տոննա՝ շրջանի մասշտաբով: Իհարկե, դա չի նշանակում, թե մենք չպետք է մտածենք առաջիկա մի քանի տարիների ապահովվածության մասին. ոչ ոք չի կարող ասել, թե ինչ կլինի առաջիկա տարիներին:

Քաղաքական բնագավառում մեզ համար շատ մեծ նշանակություն ունի մարզային մարմինների՝ մարզխորհրդի գործկոմի և մարզկոմի վերականգնման հարցը:

Երկրորդ կարևոր խնդիրը, որ կապված է այդ հարցի հետ, տեղական խորհուրդների ընտրություններն են: Ադրբեջանական հանրապետությունում սեպտեմբերի 30-ին անցկացվեցին տեղական խորհուրդների ընտրությունները: Մեզ համար մեծ պրոբլեմ էր՝ ինչպե՞ս վարվել՝ մասնակցել ընտրություններին, թե՞ բոյկոտել դրանք: Այս հարցին միանշանակ պատասխանել հնարավոր չէր: Եթե մենք գնայինք ընտրություններին, նշանակում է շփման մեջ պետք է մտնեինք, այսպես կոչված, կազմկոմիտեի հետ, գնայինք ինչ-որ կոմպրոմիսի, զիջումներ անեինք, որը կարող էր ճիշտ չհասկացվել բնակչության որոշ խավերի կողմից և անախորժությունների պատճառ դառնալ: Իսկ եթե չգնայինք, ապա դրանից կարող էին օգտվել մեր հակառակորդները, հայտարարեին, որ անցել է լիազորությունների ժամկետը, ցրեին տեղական խորհուրդները, դրանք փոխարինեին կազմկոմիտեի ներկայացուցիչներով, կամ էլ ռազմական մարմիններով: Այնուամենայնիվ, մենք որոշեցինք բոյկոտել ընտրությունները...

Ազգային մշակույթի հարցում նույնպես մեծ անելիքներ ունենք: Գաղտնիք չէ, որ մեր պետության, կառավարության սխալ քաղաքականության հետևանքով մենք վաղուց կորցրել ենք քրիստոնեական հավատը, անհարգալից վերաբերմունք ենք ցուցաբերել մեր եկեղեցիների, հոգևորականության նկատմամբ, որը բացասաբար է անդրադարձել մեր աճող սերնդի դաստիարակության գործին: Կորցնելով հավատը, կորցրել ենք շատ բան:

Այսօր, քան երբեք, մենք պետք է ուշադրություն դարձնենք հայոց լեզվի, հայ ժողովրդի, այդ թվում նաև Արցախի պատմության ուսումնասիրմանը, հասնենք նրան, որ մեր երկրի բոլոր հանրապետություններում, բոլոր ազգերն իմանան, թե ով է հայ ժողովուրդը, և ով է արցախցին, որով և հասկանան մեր շարժման իմաստը:

Տասնամյակներ շարունակ մենք անտեսել էինք մեր հոգևոր գանձերը, մեր եկեղեցիները: Մեր շրջանի տարածքում է գտնվում

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԵՐԿՈՒ ՀԱՐՑԱՋՐՈՒՅՑ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Ամարասի վանքը, որը կառուցվել է չորրորդ դարում։ Այժմ այն գրտնվում է անմխիթար վիճակում։ Թեև եկեղեցին քաղաքի տարածքում չի գտնվում, այնուամենայնիվ, քաղաքային խորհուրդը օգնել է այն վերակառուցելու աշխատանքներին։

ՀԱՐՑ.— Կոնկրետ ի՞նչ է արվել։

ՊԱՏ.— Անց են կացվել 500 մետր երկարությամբ էլեկտրահաղորդման գծեր, այժմ կատարում ենք ջրմուղի շինարարության, կոմունալ հարմարությունների ըստեղծման և այլ գործեր, որպեսզի եկեղեցին դառնա իրոք գործող։

Պարզ է, այդպիսի պայմաններում մենք շատ ենք զգում մայր հայրենիքի օգնության կարիքը։ Մեզ այսօր անհրաժեշտ է ուժեղ, ամուր, միասնական հայրենիք։ Դրա համար անհրաժեշտ է, որ բոլոր հասարակական և ոչ ֆորմալ կազմակերպությունները միավորվեն մեր եռագույնի տակ, և ամեն մի որոշում ընդունելիս՝ հաշվի առնվեն նաև Արցախի շահերը։

Ինչպես տեսնում եք՝ մեր պրոբլեմները շատ են, հուզող հարցերը՝ նույնպես։ Սակայն մենք չենք վհատվում, մնում ենք լավատես։ Արցախը պատրաստ է ամեն գնով պայքարել իր հիմնահարցի արդարացի լուծման համար։

Հայկական մի երգում հանդիպել եմ այսպիսի քառատողի (այն գրվել է 1915 թվականի ցեղասպանությունից հետո).

Թե ալեկոծ ծովի վրա
Իմ մակույկը խորտակվի,
Փրփրադեզ ալյաց մեջ էլ
Ես իմ հույսը չեմ մարի...

Որքան էլ գնալով բարդանա իրավիճակը, ինչքան էլ կատարելագործվեն սադրանքի ձևերն ու եղանակները, այնուամենայնիվ, արցախցին չի հրաժարվի իր պահանջատիրությունից, ամեն ինչ կանի իր յոթանասնամյա պայքարը հաղթանակով պսակելու համար։

ԹՂԹ.— Շնորհակալություն զրույցի համար։